Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Տեխնոլոգիա>> /10 դասաժամ/, <<Երաժշտություն>> /3 դասաժամ/, <<Կերպարվեստ>> /1 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

Դիմում / Ձև1/, մեկ լուսանկար՝ 3Х4 չափի
Անձնագիր.
Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ /
Աշխատանքային գրքույկի պատճեն . / առկայության դեպքում/
<< Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
Ինքնակենսագրություն / Ձև5/.
Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/
Որակավորման տարրակարգ / առկայության դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. փետրվարի 19-ից մարտի 1-ը ներառյալ, ամեն աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 6-ին՝ ժամը 13:00-ին,** ,,ՀՀ Գեղարքունիքի մարզի Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց'' ՊՈԱԿ–ում: Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարճաղբյուր, 5փողոց, թիվ 18: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-63-33-07 հեռախոսահամարով: